ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի Տարածաշրջանային և Եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի և Հայաստանի Գործատուների Հանրապետական Միության միջև

ք. Երևան «26» ապրիլի 2019թ.

Սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) կնքվում է ՀՀ Ազգային ժողովի Տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) և «Հայաստանի գործատուների հանրապետական միություն» կազմակերպության միջև:

Հաշվի առնելով զարգացման արդի փուլում երկրի տնտեսության առջև ծառացած մարտահրավերներին դիմագրավելու կարողությունների ձևավորման խիստ անհրաժեշտությունը, մասնավորապես՝ ԵԱՏՄ և տարածաշրջանային երկրների հետ տարբեր բնագավառներում ինտեգրման շրջանակում և հ*ամոզված լինելով,* որ իրավակիրառ պրակտիկան ներառող և գիտականորեն հիմնավորված օրենսդրական ակտերի ընդունումն անհրաժեշտ հիմքեր կստեղծի վերոնշյալ հարցերի կարգավորման համար

Բարձր գնահատելով Հայաստանի գործատուների հանրապետական միության տնտեսական և ինտեգրման քաղաքականության գործնական հետևանքների վերլուծության մասնագիտական ներուժը

Ճանաչելով Հայաստանի գործատուների հանրապետական միությունը որպես ՀՀ Ազգային ժողովի Տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի փորձագիտական և խորհրդատվական անկախ գործընկեր կառույց

կողմերը որոշեցին կնքել սույն Հուշագիրը՝ հետևյալի մասին

Համագործակցության նպատակը և ուղղությունները

Սույն Հուշագրի նպատակն է ՀՀ Ազգային ժողովի Տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի շրջանակներում ապահովել անհրաժեշտ համագործակցություն ԵԱՏՄ տարածքում, անհրաժեշտ օրենսդրական նախաձեռնությունների ներդաշնակեցման, փոխճանաչելիության ամրապնդման և ինտեգրման գործընթացները ապահովող մեխանիզմները

բարելավելու համար, նպաստելով ՀՀ Ազգային ժողովի օրինաստեղծ գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Այդ նպատակով կողմերը մտադիր են օգտագործել իրական տնտեսական քաղաքականության մշակման գործում ՀՀ ԱԺ Տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի օրենքով վերապահված դերակատարումը և գործնականում վեր ածել այն բանավեճի և երկխոսության յուրատեսակ հարթակի, ձեռնարկատերերի հետաքրքրությունները ներկայացնող փորձագիտական հանրության, քաղաքացիական սեկտորի ներկայացուցիչների և տնտեսական քաղաքականության մշակման պատասխանատուների միջև:

Նախատեսվում է համագործակցությունն իրականացնել հետևյալ ուղղություններով՝

- Տարածաշրջանային երկրների ինտեգրման, հայրենադարձության, միգրացիայի, այդ թվում՝ աշխատանքային միգրացիայի բնագավառներում;
- Եվրասիական ինտեգրման շրջանակում, Հայաստանի մրցունակության բարձրացման ուղղությամբ, պայմանավորված ԵԱՏՄ մյուս երկրներում եկամտային հարկի և էներգակիրների ցածր արժեքներով;
- Եվրասիական ինտեգրման շրջանակում տեխնոլոգիական մոդեռնիզացման ծառայությունների մատուցման, ԵԱՏՄ տարածքում մրցունակությունը բարձրացնելու և ՓՄՁ-ների գործունեությունը խթանելու հարցերում;
- պարբերական հանդիպումների, պատգամավորական թեմատիկ լսումների, սեմինարների, աշխատանքային քննարկումների և այլ գիտագործնական միջոցառումների համար, համապատասխան օրակարգ ձևավորելու նպատակով:

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով Հանձնաժողովի իրավասությանը վերապահված հարցերին կամ գործունեության ոլորտներին առնչվող իրավական ակտերի և փաստաթղթերի փորձագիտական, հետազոտական ուսումնասիրություններին, ըստ անհրաժեշտության, կարող են ներգրավվել նաև Հայաստանի գործատուների հանրապետական միության կազմում ընդգրկված, այլ հասարակական կազմակերպություններ:

Համագործակցության պայմանները

Սույն Հուշագրով նախատեսված համագործակցության շրջանակում, հանձնաժողովն ապահովում է ինտեգրման քաղաքականությանը վերաբերող հայեցակարգերի ու ծրագրային փաստաթղթերի, օրենքների, օրենքների նախագծերի և դրանց կից փաստաթղթերի տրամադրումը Հայաստանի գործատուների հանրապետական միությանը, ինչպես նաև Հանձնաժողովի նիստերին, պատգամավորական լսումներին, աշխատանքային խորհրդակցություններին,

Եվրասիական գիտախորհրդի աշխատանքներին և այլ ձևաչափերով քննարկումներին ՀԳՀՄ փորձագետների լիարժեք մասնակցությունը:

Հուշագրով նախատեսված համագործակցության շրջանակում փորձագիտական հետազոտություն կամ ոլորտային ուսումնասիրություններ իրականացնելու նախաձեռնությամբ կարող է հանդես գալ նաև Հայաստանի գործատուների հանրապետական միությունը:

Հուշագրի ուժի մեջ մտնելը և գործողության ժամկետը

Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Սույն Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ նրանցից մեկի նախաձեռնությամբ:

Սույն Հուշագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավական ուժ:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի Տարածաշրջանային և Եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողով	«Հայաստանի գործատուների հանրապետական միություն» կազմակերպություն
Նախագահ Մ. Մելքումյան	Նախագահ Գ. Մակարյան
Ստորագրություն _____	Ստորագրություն _____